

# ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՑՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

**Մարմնի, կազմակերպության անվանումը**

**Տեղեկություններ տրամադրող պաշտոնյայի անուն, ազգանունը**

**Դիմողի անուն, ազգանուն, (իրավաբանական անձի դեպքում՝ դրա անվանումը, գտնվելու վայրը) (պարտադիր).**

**Բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը (հասցեն)՝ (պարտադիր).**

**Քաղաքացիությունը.**

**Հեռախոսահամարը.**

**Էլեկտրոնային փոստի հասցեն.**

## Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պրն/տկն \_\_\_\_\_,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ \_\_\_\_\_ (հնարավորինս հստակ ձևակերպեք անհրաժեշտ տեղեկությունը) մասին:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

(Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը):

Կանխավ շնորհակալ եմ՝

անուն, ազգանուն                      ստորագրություն  
ամսաթիվ